ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Էջմիածնի Նար-Դոս փողոցի N 1բ, 1բ/1 հասցեում գտնվող Էջմիածնի ՏՀՏ-ի վարչական շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/8 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի մայիսի 24-ին կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/8 պայմանագրում 2018 թվականի հունիսի 12-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ ֆինանսների նախարարության 11.06.2018թ. N 03/26-1/10489-18 գրություն:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի 7.9 կետում <<պետական գույքի կառավարման վարչությունը>> բառերը փոխարինվել են <<պետական եկամուտների կոմիտեն>> բառերով:
Փոփոխության հիմնավորում	2018 թվականի մայիսի 24-ին կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/8 պայմանագրի 7.5 կետը:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

24.05.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/8 գնման պայմանագրի

ք. Երևան 12.06.2018թ.

<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Արշակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Էջմիածնի Նար-Դոս փողոցի N 1բ, 1բ/1 հասցեում գտնվող Էջմիածնի ՏՀՏ-ի վարչական շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 24.05.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/8 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 7.9 կետում <<պետական գույքի կառավարման վարչություն>> բառերը փոխարինել <<պետական եկամուտների կոմիտե>> բառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն հ/հ 900013202016, 900013574018 ՀՎՀՀ 02647057	<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ ք.Երևան, Հալաբյան 41 ա <<Արդշինբանկ>> ՓԲԸ <<Նաիրի>> մ/ճ հ/հ 2473700277210010 ՀՎՀՀ 01508665
Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Մկրտչյան (ստորագրություն)	Գործադիր տնօրեն՝ Գ. Արշակյան (ստորագրություն)